


ՀՀ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ



ՀՀ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ (մարզի կարգավիճակով)



Տարածքը	227 քառ. կմ
Գյուղատնտեսական հողատեսքեր	6413 հա
<i>այդ թվում՝</i> վարելահողեր	1506 հա
Թաղային համայնքներ	12
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	1101.9 հազ. մարդ

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն Հայաստանի Հանրապետության ներկայիս 48 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում: Երևանն աշխարհի հնագույն քաղաքներից է և ունի 2785 տարվա պատմություն (հավերժական քաղաք Հռոմի, Կարթագենի, Նինվեի և Գամասկոսի հասակակիցն է): Գտնվում է մոտավորապես նույն լայնության վրա, ինչ Վաշինգտոնը, Մադրիդը, Պեկինը:

Քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ Երևանյան գոգավորության վրա:

Երևանն ունի չոր ցամաքային կլիմա: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը 10-11°C է: Ամառը տևական է, շոգ, հիմնականում չոր եղանակներով (միջինը՝ 24-25°C, առավելագույնը՝ 41-42°C): Ձմեռը չափավոր ցուրտ է, հիմնականում ոչ հաստատուն ձյունածածկով (հունվարի առավելագույն ջերմաստիճանը՝ -5, -6°C, նվազագույնը՝ -31°C): Գարունը կարճատև է՝ եղանակի կտրուկ փոփոխությամբ: Մեղմ ու հաճելի է աշունը՝ արևոտ ու տաք: Տեղումների տարեկան քանակը տատանվում է 300-350 մմ-ի սահմաններում:

1828թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրով Երևանի խանությունն անցավ Ռուսաստանի տիրապետության ներքո՝ դառնալով Հայկական մարզ, ապա Երևանի գավառ, իսկ 1850թ. հունվարի 1-ից՝ Երևանի նահանգ (իր մեջ ներառելով 5 բնակավայրեր՝ Երևան, Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ, Նախիջևան, Օրդուբադ): Երևանի նահանգի կառավարումն իրականացնում էր երեք հոգուց կազմված վարչությունը: Նահանգի կենտրոն Երևանը բաժանված էր 4 թաղի, որոնք ղեկավարում էին թաղապետերը՝ յուզբաշինները և մելիքները: 1870թ. հոկտեմբերի 1-ից Երևանը Ալեքսանդր Երկրորդի հրամանով ճանաչվեց

քաղաք և դասվեց կայսրության քաղաքների շարքը՝ ունենալով 12 հազար բնակիչ: 1879 թվականին կայանում է քաղաքային դումայի անդրանիկ ընտրությունը և առաջին քաղաքապետ է ընտրվում Հովհաննես Դորդանյանը:

Խորհրդային իշխանության տարիներին գավառական քաղաքից (1920թ. բնակչության թվաքանակը 30 հազարից պակաս էր) ժամանակակից **Երևանը** վերածվել է հանրապետության խոշոր արդյունաբերական (արդյունաբերական ներուժի գրեթե կեսը), մշակութային և գիտական կենտրոնի, ինչպես նաև կարևորագույն տրանսպորտային հանգույցի (Երևանում հանգուցվում է Սև ծովը Պարսից ծոցին կապող երկաթգիծը և այն Բաքու-Թիբիլիսի երկաթուղուն միացնող Երևան-Հրազդան-Իջևան-Ադստաֆա գիծը, տեղական նշանակություն ունի Երևան-Սևանի ավազան-Սոտք գիծը, ՀՀ գլխավոր օդային դարպասն է իր երկու՝ «Չվարթնոց» և «Էրեբունի» միջազգային օդանավակայաններով, անցնում են մի շարք ավտոխճուղիներ):

Երևանը Հայաստանի Հանրապետության նախագահի նստավայրն է: Մայրաքաղաքում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու կառավարությունը, բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունները, տարբեր միությունները, հիմնադրամները, հանձնաժողովները, դատաիրավական մարմինները, դրամատների ու բորսաների ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը և այլն:

Մայրաքաղաքում են գործում Հայաստանի Հանրապետությունում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հարուստ է ճարտարապետական կառույցներով, որոնք շարունակել ու զարգացրել են միջնադարյան մայրաքաղաքների և ընդհանրապես հայկական ազգային ճարտարապետության ավանդույթները:

Մայրաքաղաք Երևանը բնակչության թվաքանակով ամենախոշորն է հանրապետությունում: Այն իր մեջ ներառում է 12 թաղային համայնքներ՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Մեքաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն, ընդգրկելով հանրապետության բնակչության մեկ երրորդը (2003թ.՝ 34.3%-ը) և բնակչության խտությամբ (4854 մարդ 1 քառ.կմ-ի վրա) շուրջ 45 անգամ գերազանցում է միջին հանրապետական ցուցանիշը:

2003թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում մայրաքաղաքի տեսակարար կշիռը կազմել է 49.3% (սպառողական ապրանքների արտադրության՝ 61.2%-ը), իրականացված շինարարության՝ 67.7%-ը, շահագործման հանձնված բնակելի տների՝ 44.2%-ը, մանրածախ ապրանքաշրջանառության՝ 83.9%-ը և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալում՝ 78.2%-ը: Ի տարբերություն տնտեսության մյուս ճյուղերի, գյուղատնտեսության համախառն արտադրանքում Երևան քաղաքի բաժինն աննշան է՝ ընդամենը 1.4%:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական գլխավոր ուղղությունը վերամշակող արդյունաբերությունն է:

2003թ. մայրաքաղաքում գործել են 1322 արդյունաբերական, 9 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 1 ձկնորսության ու ձկնաբուծության, 366 շինարարական, 223 տրանսպորտի, 74 կապի, 2879 բնակչությանը ծառայություններ

մատուցող, 5662 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 2440-ը խանութներ են, 2671-ը՝ կրպակներ, 520-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 20-ը՝ սպառողական ապրանքների և 11-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ:

2003թ. մայրաքաղաքում գործել են նաև 187 պետական և 17 ոչ պետական նախադպրոցական հիմնարկներ, 234 պետական և 26 ոչ պետական հանրակրթական դպրոցներ, 27 պետական և 9 ոչ պետական միջին մասնագիտական և 17 պետական և 52 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Մայրաքաղաքի բնակչության ստացիոնար բուժումը 2003թ. իրականացվել է 44 հիվանդանոցային հիմնարկներում: Բացի հիվանդանոցային հիմնարկներից, գործել են նաև 83 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ: Կրտսեր բուժանձնակազմի թվաքանակը կազմել է 8113 մարդ:

Մայրաքաղաքում գործել են նաև 3 պետական մանկական խնամատարական կազմակերպություններ (հանրապետությունում գործող կազմակերպությունների 25.0%-ը), որոնցում խնամվել է 324 երեխա, ինչպես նաև տարեցների և սոցիալական սպասարկման 2 պետական կազմակերպություններ (հանրապետությունում գործող կազմակերպությունների 33.3%-ը), որոնցում խնամյալների ընդհանուր թվաքանակը կազմել է 451 մարդ:

2003թ. մայրաքաղաքում գործել են 3 հանրապետական ենթակայության (Ազգային, հանրապետական երաժշտական և Խնկո-Ապոր անվան մանկական) և 31 հանրային գրադարաններ՝ 1-ը մարզային կենտրոն, 30-ը՝ քաղաքային, որոնց գրքային ֆոնդը կազմել է համապատասխանաբար՝ 6949.2 և 1738.5 մլն. միավոր:

Բացի այդ, մայրաքաղաքում գործել են ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգի 16 և համայնքային ենթակայության համերգային կազմակերպություններ, ազմակերպվել են 356 համերգներ:

2003թ. մայրաքաղաքում գործել են 49 թանգարաններ (ներառյալ՝ մասնաճյուղերը), որոնցից 31 գրականության և արվեստի, 9 պատմական, 6 հուշային, 2 ճյուղային բնույթի և 1 երկրագիտական: Թանգարանների հիմնական ֆոնդի ցուցանմուշների ընդհանուր քանակը կազմել է 1761.0 հազ. միավոր, որոնցից ցուցադրված նմուշների քանակը՝ 80.3 հազ. միավոր: Թանգարաններում աշխատողների թվաքանակը կազմել է 917 մարդ:

2003թ. թանգարաններ այցելուների ընդհանուր թվաքանակը կազմել է 716.5 հազ. մարդ, այդ թվում անվճար՝ 685.1 հազ. մարդ (95.6%): Էքսկուրսիաների ընդհանուր քանակը կազմել է 9556:

Մայրաքաղաքում 2003թ. գործել են 15 թատերահանդեսային կազմակերպություններ (հանրապետությունում գործող թատրոնների 68.2%-ը), դրանցից 7 դրամատիկական, 4 երաժշտական, 2 տիկնիկային, 1 պատանի հանդիսատեսի թատրոնները և Պետական կրկեսը: Ներկայացումների ընդհանուր քանակը կազմել է 1044, հանդիսատեսների ընդհանուր թվաքանակը՝ 229.0 հազ. մարդ:

Մայրաքաղաքում գործող 2 պետական՝ «Հայֆիլմ» և «Հայկ» կինոստուդիաներում 2003թ. ավարտվել են 20 ֆիլմերի արտադրություններ (4 լիամետրաժ, 9 փաստավավերագրական ֆիլմեր, 3 անիմացիոն և 2 տեսաֆիլմեր, 2 կինոֆիլմեր), որոնցից 3-ը՝ գեղարվեստական: Ընդ որում, 7 ֆիլմեր արտադրվել են «Հայֆիլմ» և 3-ը՝ «Հայկ» կինոստուդիաներում:

2003թ. մայրաքաղաքում գործել են 77 գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպություններ (հանրապետությունում գործող գիտական կազմակերպությունների 77.8 %-ը), որոնցից 28 կազմակերպություն (36.4%) գործել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի կազմում:

ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

Հունվարի 1-ի դրությամբ, հազար մարդ

Թաղային համայնքի անվանումը	Բնակչության քվաքանակը		
	2002	2003	2004
Ք. ԵՐԵՎԱՆ, ԸՆԴԱՄԵՆԸ	1103.3	1102.0	1101.9
ԱԶԱՓՆՅԱԿ	106.6	106.5	106.5
ԱՎԱՆ	50.1	50.1	50.2
ԱՐԱԲԿԻՐ	132.4	132.2	132.0
ԴԱՎԹԱՇԵՆ	40.5	40.4	40.4
ԷՐԵՔՈՆԻ	119.2	119.0	119.0
ԿԵՆՏՐՈՆ	130.7	130.2	129.9
ՄԱԼԱԹԻԱ-ՍԵՔԱՍՏԻԱ	142.3	141.6	141.3
ՆՈՐ-ՆՈՐՔ	142.0	142.2	142.6
ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ	12.0	11.9	11.8
ՆՈՒԲԱՐԱՇԵՆ	9.2	9.3	9.3
ՇԵՆԳԱՎԻԹ	140.5	140.8	141.1
ՔԱՆԱԲԵՌ-ՉԵՅԹՈՒՆ	77.8	77.8	77.8

ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԲՆԱԿԱՆ ՇԱՐԺԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

Մարդ

	Ծնվածներ	Մահացածներ	Մինչև 1 տարեկան մահացածներ	Բնական աճ (+,-)	Ամուսնություններ	Ամուսնալուծություններ
2002						
Ք.ԵՐԵՎԱՆ, ԸՆԴԱՄԵՆԸ	10459	8873	156	+1586	4894	912
ԱԶԱՓՆՅԱԿ	902	818	10	+84	411	65
ԱՎԱՆ	410	325	6	+85	228	37
ԱՐԱԲԿԻՐ	987	1165	11	-178	565	123
ԴԱՎԹԱՇԵՆ	233	207	1	+26	135	14
ԷՐԵՔՈՆԻ	1389	1174	15	+215	544	125
ԿԵՆՏՐՈՆ	1152	1190	51	-38	617	126
ՄԱԼԱԹԻԱ-ՍԵՔԱՍՏԻԱ	1568	1175	18	+393	671	110
ՆՈՐ-ՆՈՐՔ	1482	965	9	+517	698	139
ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ	68	137	1	-69	30	2
ՆՈՒԲԱՐԱՇԵՆ	116	53	-	+63	46	3
ՇԵՆԳԱՎԻԹ	1525	1036	23	+489	672	129
ՔԱՆԱԲԵՌ-ՉԵՅԹՈՒՆ	627	628	11	-1	277	39
2003						
Ք.ԵՐԵՎԱՆ, ԸՆԴԱՄԵՆԸ	11243	9012	154	2231	5341	952
ԱԶԱՓՆՅԱԿ	989	834	6	155	454	65
ԱՎԱՆ	491	318	7	173	289	47
ԱՐԱԲԿԻՐ	1016	1256	11	-240	614	157

	Ծնվածներ	Մահացածներ	Մինչև 1 տարեկան մահացածներ	Բնական աճ (+,-)	Ամուսնություններ	Ամուսնալուծություններ
2002						
ԴԱՎԹԱՇԵՆ	272	201	1	71	151	15
ԷՐԵՔՈՆԻ	1154	1174	19	280	550	80
ԿԵՆՏՐՈՆ	1201	1142	60	59	565	167
ՄԱԼԱԹԻԱՍԵՔԱՍՏԻԱ	1736	1085	14	651	820	100
ՆՈՐ-ՆՈՐՔ	1514	1019	9	495	765	130
ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ	90	115	1	-25	45	7
ՆՈՒՔԱՐԱՇԵՆ	128	51	2	77	49	7
ՇԵՆԳԱՎԻԹ	1659	1111	16	548	756	124
ՔԱՆԱՔԵՆ-ՉԵՅԹՈՆ	693	706	8	-13	283	53

**ԱՐԴՅՈՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՅՈՒՆՆԵՐ
ԸՍՏ ԵՐԵՎԱՆ ԲԱՂԱՔԻ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ**

	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով, մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն. դրամ	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ, համադրելի գներով, %
2002			
Ք.ԵՐԵՎԱՆ, ԸՆԴԱՍՏԵՆԸ	162374.3	164550.6	108.2
ԱԶԱՓՆՅԱԿ	3491.7	3345.9	99.6
ԱՎԱՆ	3960.3	3672.5	135.9
ԱՐԱՔԿԻՐ	14663.0	13767.0	139.3
ԴԱՎԹԱՇԵՆ	2209.2	2195.6	87.6
ԷՐԵՔՈՆԻ	14723.8	15331.5	123.6
ԿԵՆՏՐՈՆ	58032.7	59622.7	94.5
ՄԱԼԱԹԻԱՍԵՔԱՍՏԻԱ	18640.5	20311.9	134.0
ՆՈՐ-ՆՈՐՔ	6710.0	6659.4	109.9
ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ	327.2	327.2	105.0
ՆՈՒՔԱՐԱՇԵՆ	267.7	270.4	39.8
ՇԵՆԳԱՎԻԹ	29095.6	29236.6	106.0
ՔԱՆԱՔԵՆ-ՉԵՅԹՈՆ	10252.3	9809.9	115.9
2003			
Ք.ԵՐԵՎԱՆ, ԸՆԴԱՍՏԵՆԸ	209633.7	209808.6	119.9
ԱԶԱՓՆՅԱԿ	5032.0	4826.7	113.4
ԱՎԱՆ	3539.8	3399.1	90.0
ԱՐԱՔԿԻՐ	31688.5	32100.0	190.8
ԴԱՎԹԱՇԵՆ	3585.4	3493.1	162.4
ԷՐԵՔՈՆԻ	19960.2	20869.8	111.8
ԿԵՆՏՐՈՆ	77985.1	78499.1	119.4
ՄԱԼԱԹԻԱՍԵՔԱՍՏԻԱ	18622.9	17930.7	133.0
ՆՈՐ-ՆՈՐՔ	6289.9	6286.5	95.2
ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ	628.3	628.3	112.1
ՆՈՒՔԱՐԱՇԵՆ	204.4	204.1	87.5
ՇԵՆԳԱՎԻԹ	30550.3	30841.4	101.0
ՔԱՆԱՔԵՆ-ՉԵՅԹՈՆ	11546.9	10729.8	107.8

2003թ. մայրաքաղաքի արդյունաբերական արտադրանքի արտադրության 37.2%-ը բաժին է ընկել Կենտրոն համայնքին, 14.6%-ը՝ Շենգավիթին, 8.9%-ը՝ Մալաթիա-Մերաստիային, 9.5%-ը՝ Էրեբունուն, 15.1%-ը՝ Արաբկիրին, 5.5%-ը՝ Քանաքեռ-Զեյթունին, 3.0%-ը՝ Նոր-Նորքին, 1.7%-ը՝ Ավանին, 2.4%-ը՝ Աջափնյակին, 1.7%-ը՝ Գավթաշենին և 0.4%-ը՝ Նորք-Մարաշին ու Նուբարաշենին:

2003թ. Երևան քաղաքի ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում 23.8%-ը բաժին է ընկել Կենտրոն ու Նորք-Մարաշ համայնքներին, 27.7%-ը՝ Մալաթիա-Մերաստիային, 14.4%-ը՝ Էրեբունուն և Նուբարաշենին, 17.5%-ը՝ Արաբկիրին, 4.6%-ը՝ Նոր-Նորքին, 4.2%-ը՝ Աջափնյակին, 3.4%-ը՝ Շենգավիթին, 2.8%-ը՝ Ավանին, 1.2%-ը՝ Քանաքեռ-Զեյթունին և 0.4%-ը՝ Գավթաշենին:

2003թ. քաղաքի բնակչությանը մատուցված ծառայությունների 80.2%-ը բաժին է ընկել Կենտրոն համայնքին, որտեղ կենտրոնացած են կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների մեծ մասը, 6.3%-ը՝ Մալաթիա-Մերաստիային (ներառյալ նաև օդային տրանսպորտի ծառայությունների ծավալները), իսկ մնացած 13.5%-ը՝ մայրաքաղաքի մյուս համայնքներին:



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ 10 000 ԲՆԱԿՉԻ ՀԱՇՎՈՎ, 2003թ.

	Ընդամենը	նրանցից	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	10 000	5335	4665
Ծնվածներ	102	54	48
Մահացածներ	82	44	38
Անուսնություններ	48	X	X
Անուսնալուծություններ	9	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	17.5	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ`			
նախադպրոցական	196	105	91
հանրակրթական	1328	708	620
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	89	47	42
միջին մասնագիտական	121	65	56
բարձրագույն մասնագիտական	570	304	266
Առողջապահության ոլորտ`			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	23
Մարզիկներ, մարդ	134	71	63
Զբաղվածներ, մարդ	2800
նրանցից` գիտական հիմնարկներում	48	26	22
նրանցից` գիտության դոկտոր	4	2	2
գիտության թեկնածուներ	13	7	6
ուսուցիչներ	103	55	48
բժիշկներ	72
կրտսեր բուժանձնակազմ	74
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված), մարդ	294	157	137
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդհանուր կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1647
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	390	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	11016
թատրոն	2078
համերգ	1562
թանգարան	7470
Իրավական ոլորտ			
հայտնաբերված վարչական իրավախախտումների քանակը տարվա ընթացքում	936	X	X
անձանց թվաքանակը, որոնց նկատմամբ կայացվել են վարչական իրավախախտումներով պայմանավորված վճիռներ, մարդ	860
հանցագործության դեպքերի քանակը տարվա ընթացքում	46	X	X

